

ՏՄԱՆԵՐՈՐԻ ՏՍՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան դինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն անգլագրատան մէջ:

Օտարապարտադիր դիմում են ուղղակի  
Կապուս. Քեդակույա «Միսակ»

Խմորաբարձր ընդ 10—2 ժամ  
(Բացի կիրակի եւ տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների ժամը, զմարտում են  
խորանայն ըստին 2 կոպեկ:

## ԲՈՎԱՆԳՎՈՒԹԻՒՆ

Հրէաների ջարդի անտեսական հետեանքը—  
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ «Մասիս» լրագրից:  
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ  
ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիա: Թիֆլիս:—ՀԵՌԱՎԻՐ-  
ՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲՍՆԱՍԻՐՈՒ-  
ԿԱՆ: Մատենագրութիւն:

## ՀՐԷԱՆԵՐԻ ԶԱՐԳԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԵՏԵՒԱՆՔ

Բարբարոս շարժումը, որ տեղի ունի այս  
բողոքի ամբողջ հարաւային Ռուսաստա-  
նում ինչ պատճառներից առաջ եկաւ,—  
մեր նպատակը չէ այստեղ քննելու: Պատ-  
ճառները շատ բազմազան են, ուստի ժո-  
ղովրդի ֆանատիկութիւնը մոլորական  
կրօնի հետեանքների դէմ, հրէաների վերա-  
բերութեամբ բացառական օրէնքները, ու-  
րոնց զօրութեամբ հրէան իրաւունք չունի  
ապրել ամբողջ Ռուսաստանում, այլ պետու-  
թեան մի քանի նահանգներում միայն, այդ  
պատճառով նրանց մի տեղ անչափ խմբվելը,  
նրանց իրաւունք չունենալը հողեր գնե-  
լու, նրանց ձեռքով ուսուցողները հարս-  
տահարելը, նրանց միմիայն առուտուրով և  
արդիւնագործութեամբ պարտաւերելը, մամու-  
լի մի մասի ուսուցողները մեղաւորու-  
թեան հրէաների դէմ անգաղար զրգուելը,  
նոյն իսկ հրէաների սահմանափակ ընտա-  
նեկան և հասարակական կենսքը, որի պատ-  
ճառով նրանք դարձրել չէին խառնվում  
ուսուցողները հետ, նրանց իրաւունք չու-  
նենալը գործ գնել իրանց մտաւոր ոյժերը  
հասարակական և պետական այս կամ այն

ասպարիզում,—հաս այդ բոլոր պատճառ-  
ները միասին վեր առած ճիշտում են և  
վառ են պահում միշտ բուն ուսուցողու-  
րի և հրէաների մէջ յարաբերութիւնների  
սաստիկ խորթութիւն և միջոց չեն տալիս  
համբարաշխութեան կապ հաստատել մի և  
նոյն պետութեան համաբարաբարների  
մէջ:

Ի՞նչ է եղել վերջին տարալի անցքերի  
շարժումը, արդեօք յեղափոխականների  
ստորերկրայ պրօպագանդան, որոնց նպա-  
տան է որքան հնար է աւելի խառնա-  
կութիւն գցել Ռուսաստանում, թէ մասամբ  
ժողովրդի ազիտութիւնը, որ մի բառ մի-  
սի տեղ ընդունելով, հաստատեց էր որ  
ինքն տեղութիւնը հրամայել է ջարդել  
հրէաներին, թէ մասամբ և զերմանիայի  
հակահրէական ամօթալի շարժման օրի-  
նակը,—մենք այստեղ քննել չենք կարող,  
քանի որ վերջին օրերի տխուր անցքերը  
կատարելագույն բացատրված չեն:

Բայց անհրաժեշտ է, որ հարաւային Ռու-  
սաստանի մէջ պատահած հրէաների սար-  
սափելի ջարդը ոչ թէ միայն կաղքատացի  
նոյն իսկ հրէաներին, բայց հարուած կը  
տայ և հարաւային Ռուսաստանի ամբողջ  
առուտուրին, հարուած կը տայ և ուսու-  
սողներին և արդիւնագործութեանը առ-  
հասարակ, արձագանք կունենայ և պետու-  
թեան ներքին անտեսական կենսքի մէջ,  
վատ ներգործութիւն կունենայ և Ռուսա-  
ստանի արտաքին, միջազգային անտեսական  
յարաբերութիւնների վրա:

Հարաւային Ռուսաստանում առուտուրը,

արդիւնագործութիւնը, ֆարքիկաները, վա-  
ճառականութիւնը, բանկերը, բաժանորդա-  
կան այլ և այլ ընկերութիւնները՝ հրէայ  
ազգաբնակչութեան ձեռքում են: Պետու-  
թեան մի մասի անտեսական դիրքը կապ  
ունի նոյն պետութեան միւս մասերի ար-  
տեսական գրութեան հետ:

Արդէն առուտուրը ընկած է հարաւա-  
յին նահանգներում, առաջին հարկաւորու-  
թեան մթերքների զննող սաստիկ բարձրա-  
ցել են, գլխաւոր ֆարքիկաները փակված  
են, մեծ քաղաքների մի քանի բանկերը սը-  
նանկանալու մօտ են, արտասահմանից դադա-  
րել են ապրանքներ բերելուց, ունեւոր հը-  
րէաները, որոնց գործարաններում հազա-  
րաւոր մշակներ էին բանում, զգում են ի-  
րանց գործերը և տեղափոխվում են ար-  
տասահման, հարաւային Ռուսաստանի մի  
քանի տեղերում ամեն տարի տեղի ու-  
նեցող սոնալաճանքները չը կայացան այս  
տարի, հասարակութիւնը հանում է իր կա-  
պիտալները մասնաւոր և հասարակական  
բանկից և տանում, դնում է պետական  
բանկի բաժինները, Արիփի մի բանկ օժան-  
դակութիւն է խնդրում կառավարութենից,  
արդէն լրագրիներում լուր է տարածվել որ  
այս տարի Նիժնի-Նովոգորոզի սոնալաճառը  
կայանալու չէ, և այլն:

Այդ տեսակ անտեսական ճղնաճամ չէ  
կարող ներգործութիւն չունենալ և Ռու-  
սաստանի միջազգային անտեսական յարա-  
բերութիւնների վրա, ուստի արժեք զգիւթերի  
արտասահմանում սաստիկ ընկնելու վրա:  
Իսկ երբ արժեք զգիւթերը ընկնում են, դրա

բաժինը, որ հիմնված է ամբողջապէս իրողու-  
թիւնների ճոխ հաւաքածուի, լոյկիկական դատու-  
րութեան, վկայութիւնների և խիստ համեմա-  
տական սխառեմայի վրա:

Բայց ստորինը գրքի հեղինակի մէջ մենք  
բարեւում ենք ազատամիտ, առաջադէմ կու-  
սակցութեան մարդուն, այն փոքրաթիւ հայ  
ընտանիքի անդամակցուն, որին և մենք մեզ  
միշտ պատիւ ենք համարել պատկանելու:  
Առաջադէմ ուղին Ռուսաստանի հայոց գրա-  
կանութեան մէջ մտցած է եղել Ս. Նազա-  
րեանցի ձեռքով և նրանք որոնք այժմ պատկա-  
նում են այդ ուղղութեանը, հպարտութեամբ  
կարող են իրանց անուանել Նազարեանցի աշա-  
կերաներ:

Յիսուսի սիրով թուականների սկզբներում,  
երբ հայերի մէջ դեռ չը կար ազգային զգաց-  
մունքի ինքնաճանաչութիւն, երբ հայը դեռ չէր  
խօսում ու գրում իր գրական, աշխարհաբառ  
մայրենի լեզուով, երբ մեր հասարակութեան  
մէջ դեռ զարթնած չէր ինքնաքննութեան զգաց-  
մունքի նշույլն անգամ,—յանկարծ հանդէս դուրս  
եկաւ մի մարդ որ սկսեց քարոզել աշխարհա-  
բառ կենդանի լեզուի գործածութիւնը և առա-  
ջին փորձ փորձեց ստեղծել այդ կենդանի գրա-  
կան լեզուն, առաջինն էր, որ մտցրեց մամուլի  
մէջ ինքնաքննութեան սխառեմը, առաջինն էր,  
որ փորձեց բացատրել ազգութեան գաղափարը,  
յայտնելով որ ազգութիւնը և կրօնը չոկ բաներ են:  
Ինչպէս միշտ պատահում է վերանորոգիչ-  
ների հետ, նրա դէմ զինվեցաւ խաւարը, մոլե-  
ռանդութիւնը և ինքնահաւան տգիտութիւնը  
զանազան Արաբատեանների, Չլքեղեանների և  
Մանգլիսեանների առաջնորդութեամբ: Մի խումբ  
գրողներից, որոնք կեղծաւոր կերպով իրանց  
ցոյց էին տալիս Նազարեանցի բարեկամներ,  
մամուլեցին նրան կառավարութեանը և զրել

հետ միասին և ոսկին հրէշաւոր կերպով  
բարձրանում է: Ահա արդէն հեռագիրը  
մեզ հաղորդում է որ ուսուց արժեք զ-  
թերը, որոնք մի քանի շաբաթ առաջ յան-  
կարծ բարձրացել էին եւրօպական բօրա-  
ների վրա, այժմ սաստիկ ընկել են: Ոսկին  
բարձրացել է մինչև 8 ռուբլ 9 կոպեկ, իսկ  
ուսուց 100 ռուբլ որ իսկապէս հասարար  
է 300 գերմանական մարկի և որ մի քանի  
շաբաթ առաջ արժէր չամբուրդի մէջ 218  
մարկ, այժմ ընկել է 207 մարկի, ֆարի-  
զում, ուր մայիսի սկզբում ուսուց 100  
ռուբլ արժէր դեռ 261 Ֆրանկ, այժմ ըն-  
կել է 256 Ֆրանկի, և այլն:

Եւրօպական բօրաները առհասարակ  
շատ զգայուն են միշտ դէպի եւրօպական  
մի պետութեան մէջ կատարվող անտեսա-  
կան կամ քաղաքական անցքերը:

Այդ տեսակ անցքեր, ուրեմն, ինչպէս  
ազգաբնակչութեան մի մասի ջարդը միւս  
մասի ձեռքով, ժամանակակից պետութիւն-  
ների միջազգային յարաբերութիւնների մէջ  
համարվում են կորստաբեր անտեսական  
ձգնաժամեր և էժան չեն նստում նոյն իսկ  
ազգաբնակչութեան ջարդող մասի համար:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍ» ԼՐԱԳՐԻՑ

Ռուսաստանէն հասած վերջին լուրերէն  
կիմացուի թէ Ս. Էլմիաճնի Ա.Կ. Կաթո-

տուեցին հայոց կաթողիկոսին մի պաշտօնական  
թուղթ մինիստրութեանը, որով կաթողիկոսը  
խնդրում էր կառավարութենից դադարեցնել  
«Հիւսիսափայլ» հրատարակութիւնը, որպէս վը-  
նասակար հրատարակութիւն ազգի և եկեղեցու  
զգութեան համար:

Ահա Գահաղիկանի գրքի պատմական մասի  
կարճագոտ բովանդակութիւնը:  
Կրքերը հանդուստեան Նազարեանց յետ քաշ-  
վեց գրական ասպարիզից վերջապէս 1879  
թիւն նա վախճանվում է:

Չէ անցնում մի վեց ամիս և «Փորձ» ամա-  
զիրը իր աշխատակից երկրեանի յօդուածով նո-  
րորում է այն բոլոր զրպարտութիւնները և կեղ-  
տտութիւնները արդէն մեռած Նազարեանցի  
դէմ, որ այդ նշանաւոր գործող կրքի իր կենդա-  
նութեան ժամանակ իր խաւար թշնամիներ  
կրքը:

Բայց երկրեանը խորամանկութեամբ և ըսկ-  
սում գործը: Նա կամենում է ցոյց տալ որ  
հետեւում է ոչ թէ այն առաձին, որ ասում է  
«մեռածների մասին կամ ոչինչ, կամ լաւ»,  
բայց այն աւելի ժամանակակից առաձին, որ  
ասում է «մեռածների մասին ճշմարտութիւն»:  
Ահա ինչ է ասում նա:

Հալու թէ վեց ամիս կայ Նազարեանցի վախ-  
ճանելու օրից և դեռ չէ անցած ու չուս չէ անց-  
նելու այդ կորուստի ընդհանուրի պատճառած  
ցարը, դեռ հայոց եկեղեցիներում կատարվում  
է նրա հոգեհանգիստը ու վառ է նրա խոնկ ու  
մոմը և ահա մենք վստահանում ենք ամենայն  
խստութեամբ և անաչառութեամբ քննու-  
թեան տակ ձգել հանգուցիլայ գրականական  
բոլոր գործունեութիւնը:

Գահաղիկանի գրքի մէջ բերած օրինակներից  
երկու երեքը բաւական է ցոյց տալ համոզվե-  
լու համար, որքան խիստ և անաչառ և երի-  
ցեանը: Ահա ինչ է ասում Գահաղիկան:  
Առաջին երկու երեք սողը, որ Նազարեանցի:

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### ՄԱՍԻՍԻ ԲՈՒԹԻՒՆ

«ՀՐԱՊԱՐԱԿԱՒՈՍ ԶՍԹՆ» Ս. Գահաղիկանի,  
Մօսկվա, 1881 թ. գինը 2 ռ.

Այս օրերս հրատարակվեցաւ Մօսկվայում  
վերս յիշված վերնագրով հայերէն մի գիրքը,  
351 երեկոց բաղկացած, որ մեր կարծիքով, մի  
զեղեցիկի բացառութիւն է կազմում մեր ժամա-  
նակակից գրականութեան մէջ:

Գահաղիկանի գիրքը կարգաւորում է մեծ ու-  
րախութեամբ, մինչև անգամ կասեմ յափշտա-  
կութեամբ: Նա մեր արդեան հայ գրականու-  
թեան մէջ այն կողմից բացառութիւն է կազ-  
մում, որ մեր գրականական պատմութեան մօ-  
տիկ անցնալի անաչառ քննադատութիւն է: Նա  
այն կողմից էլ բացառութիւն է կազմում, որ  
շատ հազիւ է պատահում որ մի հայ հրապա-  
րակապէս հանդէս դուրս գայ մի ուրիշ հային  
պաշտպանելու: Հային յատուկ է ցին գցել  
հայի երեսին, ինչքան բարձր էլ լինէր նա,  
ունակելու անել նրա պատիւը,— բայց ոչ թէ  
պաշտպանել մի այլ հային....

Գահաղիկանի գիրքը արտայայտութիւն է  
զարթնած հասարակական իր զճմտանքի, դա  
մի բողոք է, խղճմանքի մի աղաղակ է ընդ-  
դէմ զրպարտութեան ու բամբասանքի, սև նա-  
խանձի, քսութեան, կեղծաւորութեան և խա-  
ւարասիրութեան:

Խօսքը պ. Ալեքսանդր երկրեանի յօդուածի  
վրա է, որ նա հրատարակեց «Փորձ» մէջ 1879  
թիւն Ստեփաննոս Նազարեանցի մասին:

Բամբասանք և զրպարտութիւն ենք ասում,—  
որովհետեւ Գահաղիկանը շօշափելի փաստերով  
ցոյց է տալիս, որ երկրեանը յեղաշրջում է և  
աղաւաղում է խօսքեր և իրողութիւններ Նազա-  
րեանցի կենսագրութիւնը գրելու ժամանակ:  
Սև նախանձ,—որովհետեւ «Փորձ» աշխատակիցը  
ամեն ճիգ է թափում ցոյց տալու համար որ  
Նազարեանցը ոչինչ նշանաւոր բան չարդիւնա-  
բերեց իր ամբողջ գործունեութեան ժամա-  
նակ: Գաթութիւն,—որովհետեւ ազնիւ պարօնը,  
ինչպէս Գահաղիկանը նրան անդադար ա-  
նուանում է իր զրքի մէջ, ջանում է իր յօդ-  
ուածով հաճելի լինել այն պարօնների մի  
յայտնի խմբին, որոնք միշտ եղել են Նազա-  
րեանցի ոխերիմ թշնամիներ և աշխատել են  
նրան մատնել, նրան վիստել: Կեղծաւորութիւն  
և խաւարասիրութիւն,—որովհետեւ երկրեան կա-  
մենում է իր գրութեամբ մէջ կրկնել առաջադէմ,  
նոր, ազատամիտ ուղղութեան տէր մարդ, յան-  
դիմանում է մինչև անգամ Նազարեանցին որ  
սա չէր հետեւում իր ժամանակակից ուսու-  
ցողութեան մամուլի ոգուն և մի և նոյն ժամանակ  
պախարակում է Նազարեանցին նոյն իսկ նրա  
բոլոր առաջադէմ գաղափարների համար, համա-  
րելով նրանց ազգի համար ամենամիտապար  
զաղափարներ:

Ահա ինչ տպաւորութեան տակ է լինում  
և ինչ եզրակացութիւնների ու համոզմունքների  
է գալիս ընթացիկը, Գահաղիկանի գիրքը ամ-  
բողջապէս կարգաւորուց յետոյ: Գա ճշմարտ է  
մի պոլեմիկական խիստ, անողորմ գրութեամբ է,  
բայց ոչ թէ մեր հայոց միւս պոլեմիկական  
գրութեան նման, որոնց մէջ տիրում են դա-  
րակ խօսքեր, կիրք, ապացոյցներից զուրկ մըտ-  
քեր,—բայց մի ծանր, յարկաւ աշխատանք, որ  
գրելու համար, երեւում է, հարկաւորվեցաւ շատ  
ժամանակ և գործի խղճմանուր ուսուցմանի-

զիկուն, ի ցաւ արտի բոլոր Հայոց, Ռուսիոյ  
կայսեր սպանման լուրը լսելէն ի վեր Հիւ-  
ւանդացած է: Ար պատմուի թէ բոլորովին  
առանձնացած է Վեհաբանին մէջ, և քովը  
մի միայն Մանկունի եպիսկոպոսը կը յա-  
ճախէ: Իսկ բոլոր միաբանք, նոյն իսկ բը-  
ժիշկն անգամ, Մանկունիի կողմէն արգել-  
ուած են հիւանդին քովը երթալ:

Վեհ. Հայրապետին այս ցաւայի կացու-  
թիւնը լսելով սաստիկ զգածուած են Ռու-  
սիոյ ազգայինք և չին կարող բացարձակա-  
պէս իրենց ցաւն յայտնել, քանի որ էջ-  
միաճնի Անիոզն իսկ կը լռէ այս մասին և  
պաշտօնական տեղեկութիւն չը հրատարա-  
կէր: Մանկունի եպիսկոպոսը բարեպատեհ  
առիթ չհամարելով Վեհ. կաթողիկոսին  
հիւանդութիւնը կը ծածկէ, և ամենայն  
ինչ կը գործէ յանուն նորա: Մանկունի  
Վեհապետ կաթողիկոսին անուամբ կաթո-  
ղիկոսութիւն կընէ և ապօրէն հրա-  
մաններով և անօրէնութեամբ դրամ  
զիջելով, իւր ապագայն կապահովէ կ. Պո-  
լիս չուելու համար: Այսմ ապացոյց են  
շատ մի թիւնական Առաջնորդ եպիսկոպո-  
սաց և վարդապետաց յեջմիածին կոչուելն,  
և նոյն վիճակաց եկեղեցական, դպրոցական  
և այլ հասութից ուղղակի ի Վեհարան  
պահանջութիւն և վիճակային դպրոցաց ան-  
խնամ մնալն:

Ըստ մեզ՝ կ. Պոլսոյ Ազգ. վարչութեան  
և մանուսակ Ս. Պատրիարքին անհրաժեշտ  
պարտաւորութիւնն է՝ ապահով միջոցներ  
ով ստուգել այս տխուր կացութիւնն, և  
ընդհանուր ազգին ուշադրութիւնն հրա-  
ւերել Վեհ. կաթողիկոսին ամենացաւալի  
և անակնկալ հիւանդութեան և էջմիածնի  
վտանգակց կացութեան վերայ, վասն զի  
կաթողիկոսին հիւանդութիւնն, եթէ ըս-  
տոյց է, առաւել փնասակար է ազգին՝ քան  
թէ նորա վախճանումը: Կարծեալ կա-  
սեմք, եթէ ստոյգ են այս տեղեկութիւնքը,  
ազգը պարտի աճապարել ապահովելու էջ-  
միածնի կաթողիկոսութեան վարչական  
գործոց վիճակը. վասն զի էջմիածնի բոլոր

իրաւունքները կրնան վտանգի հանգիստի,  
և այնուհետև ազգին ամեն ջանքն ու աշ-  
խատութիւնը կարող չը լինին եղած ծանր  
փնասները դարմանելու:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Լինկորան, 4 մայիսի

Ար խնդրեմ սոյն նամակովս ստանաք ցուցակն  
նուիրատուաց հանդերձ 299 բուրջ գումարի, որը  
ժողոված է Ջիբրիլարում և նորա սանձաննե-  
րում եղած անձինքներից, Տէր Յովհաննէս Մկր-  
տիչեան Եղնեանցի ձեռամբ, յօրուտ Տաճկաս-  
տանի սովեալ հայերի և կը խնդրեմ դրամները  
հասցնէք ուր հարկն է, իսկ ցուցակը նուիրա-  
տուաց բարեհաճէք տպագրել ձեր պատուական  
ազգային լրագրումը, ի միանմութիւն նուիրա-  
տու անձանց:

Ստեփաննոս Տէր Օհաննանց 15 բ., Արքայաժողով  
Յովհաննէսեան Արքայապետաց, Աղքատները Յարու-  
թիւնեան Ղուկիանց, Յովհաննէս Մկրտիչեան  
Եղնեանց, Իւրաքանչիւրը 10 բ., Աղլան Բուր-  
ճեանց, Միրզա Բարաթեանց, Յովսէփ Բաբաբով,  
Յակոբ Չարաբեանց, Թաւրան Մահմադ օղլի,  
Կոնստանտինոս Մարտիրոսեանց, Իոսիփ Յիւ-  
րուբ, Կոնստանդին Ղարապիտեանց, վրացի Գան-  
դուրով, Գայեանէ Ղազարեանց, Առաքել Պետ-  
րոսեանց, Սիմէոն-Սերգէյեան Յովհաննէսեանց,  
Ալեքսանդր Սուքիասեանց, Յարութիւն Յար-  
Լաւրանեանց, Աստուածատուր Ղուկասեանց,  
Տամուլե Բանսեւիտչ, Բեգլար Բոչարեանց,  
Արքայաժողով Նապրեանց, Յովսէփ Դատարեանց,  
Իւրաքանչիւրը 5 բ., Կարապետ Սարգիսեան Մա-  
րութեանց 15 բ.: Յայտնի ոմն 4 բ., Աստուա-  
ճատուր Սարգիսեանց, Անդրէաս Հայրապետեանց,  
Գրիգոր Բաղասանեանց, Չափար Հաջի օղլի,  
Խորով Սարգիսեանց, Յովհաննէս Բաղբեանց,  
Լիզա Բիճա Սիւվիլի, Իոսիփ Սարաբե, Տաթևոն  
Փինտեյտչ, Իւրաքանչիւրը 3 բ.: Մկրտիչ Թու-  
մասեանց, Գրիգոր Յակոբեանց, Խարով Թամա-  
ղեանց, Միրզա Արզումանեանց, Հայրապետ Խու-  
զապիտեանց, վրացի ոմն, Մոլլա-Մասի Մահ-  
մադ Բիզա օղլի, Թաղեոս Չինալարեանց, Յով-  
հաննէս Մկրտիչեանց, Բազիլ Ներսիսեանց, Թու-  
ղեոս Վալդիբեանց, Գասան Գամրեանց, Յովհան-  
նէս Մնացականեանց, Ղուկաս Արքայապետեանց,

Գարաթիմ Հայրապետեանց, Սերգէյ Հախումեանց  
Իւրաքանչիւրը 2 բ., Ս. Кулыгинъ, Петръ Жы-  
ковъ, Աւանէս Ղազարեանց, Ղանի Աղաբաղա-  
օղլի, Ռաֆայել Գանդարով, Աւետիք Բանիսեանց,  
Սարգիս Բարխուդարեանց, Միքայէլ Մկրտի-  
րեանց, Գէորգ Ղուկասեանց, Վիրգի Արզու-  
մեանց, Խաչատուր Ստեփանեանց, Աւանէս Յով-  
սէփեան Իւրաքանչիւրը 1 բ., Ս. Карналиевъ 40  
կ.: Բնդամենն է 230 բ. 40 կոպ.:

Փոստի ծախան ժողովակը գումարից դուրս հա-  
նելով 1 բ. 40 կոպ., կը մնայ ուրեմն 229 բ.,  
որը սոյն ծրարովս ուղարկում եմ:

Ստեփաննոս քանձայ Տէր-Ստեփաննոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 14-ին Նորին կայսերական Բարձրու-  
թիւն Մեծ Իշխան Կովկասեան Փոխարքան հա-  
սել է թիֆլիս:

Պ. Շահաղիբեանցի «Հրապարակախոս Չայն»  
գիրքը գնելու ցանկացողը կարող է գիտել իրան  
հեղինակին հետեալ հասցեով. «Москва, Ар-  
мянский переулокъ, Лазаревск. Инстит. Сум-  
бату Шахъ-Азизъ.» Գիրք ամեն տեղ 2 բուրջ է:

«Մեղու Հայաստանի» լրագիրը հաւատացնում  
է որ այն լուրը թէ Գորու մտ գանձված վրա-  
ցախոս Ուպլիցիթի հայ գիւղը դիտուորութիւն  
ունի ընդունել ուստադաւանութիւնը, սխալ է:  
Բայց մեզ հաստատ յայտնի է որ բացի մեր  
խմբագրութիւնից տեղական և մի քանի միւս  
խմբագրութիւններն էլ ստացել են այդ մասին  
թղթակցութիւններ, որոնց մէջ հաղորդում են  
թէ այդ գիւղը արդէն ներկայացրել է կրօնա-  
փոխութեան մասին խնդրք վրաստանի Էկզար-  
խիս:

Յիշեցնում ենք մեր ընթերցողներին որ «Մը-  
շակի» խմբագրութեան մէջ ընդունվում են  
նուիրատուութիւններ յօրուտ այն որբանոցի որ  
պիտի հիմնով թիֆլիսում հանգուցալ կայսր  
Ալեքսանդր II-ի անունով: Նոյն որբանոցի հա-  
մար նուիրատուութիւնները ընդունվում են և  
պ. կասեմովի առևտրական տան մէջ, որ

գտնվում է Երևանեան հրապարակի վրա, Ջա-  
կելու տանը:

Մեզ խնդրում են յայտնել որ այս օրերս լայն  
տեսաւ Շուշու քաղաքում պ. Տիգրան Նազա-  
րեանցի հրատարակութիւնների երկրորդ գրքոյ-  
կը՝ «Պոլիտիկա և սոցիալիզմ» վերնագրով,  
գործ Լիւովսի Գրքայի գինն է 20 կոպէկ:  
Հասցէն. Шуша, Тиграгу Назарянцъ.

Մեզ գրում են հետեալը Սուխուովցի. «Սի-  
նոպի կողմերից հայ հողագործ ընկալիչ-  
ները, չը կարողանալով համբերել իրանց դրու-  
թիւնը Թիւրքիայում, ստիպվում են գաղթական  
լինել և առաջատուար մի նաւով գալիս են  
Սուխում, բայց երբ օր շարունակ մնում են  
նաւի մէջ, հրաման չը ստանալով ավ իջնել:  
Նաւի մէջ երկու յղի կանայք ծնում են: Վեր-  
ջապէս երեք օրից յետոյ հեռագրի հրամանով  
թղթուորութիւն են ստանում ավ իջնել, բայց  
գաղթականները մնում են բաց օդի տակ, տեղ  
չունենալով պատուարվելու: Խնդրում ենք հայ  
եղբայրներից չը զղանան այդ գաղթականների  
մասին հոգալու և նրանց մի բերրի տեղ շնորհ-  
ւուն աշխատել:»

«Agence Russe» լրագիրը հերքում է որ ուսու  
կառավարութիւնը խառնվելիս լինէր Բոլշա-  
րիայի ներքին գործերում:

«Русский Курьеръ» լրագրում կարդում ենք  
որ կոմս Կուտայսով կուզարկով հարաւային Ռու-  
սաստանը, այդտեղ պատահած անկարգութիւն-  
ները քննելու համար: Հրէաների Հարգը պատ-  
ճառեց Կիւիվի նահանգին 1,137,800 բ. փնաս:

Մայրաքաղաքի լրագիրները լսել են, որ թա-  
գաւորաստան կին, Գէսէ Գէջիման, որի մահ-  
ւան պատի կատարելը, ինչպէս յայտնի է,  
յետաճգնեցաւ նրա յղութեան պատճառով, այժմ  
բանտում կալանաւորված լինելով, միմե է ե-  
րեխային:

«Спб. Вѣд.» լրագիրը հաղորդում է որ Մեծ  
Իշխան Կոնստանտին Նիկոլաևիչը մայիսի 11-ին  
ուղևորվել է Կրիմ:

արտայայտել լինելու յանձն էր առել Նրիցեանը:  
Լրագրական յօրուածի տանձնատուական գիրքը  
մեզ թոյլ չէ տալիս աւելի քաղաքածներ անել  
Շահաղիբեանի համակերել, հետաքրքրական,  
յարգելի աշխատանքից, և այդ պատճառով խոր-  
հուրդ ենք տալիս իւրաքանչիւր հային գնել  
«Հրապարակախոս Չայն» գիրքը և կարգալ նը-  
րան մեծ ուշադրութեամբ: Գրքի ոճը թիֆլիս  
և դուրեկան է և 35) երեւոյց բաղադրած հաստ գիր-  
քը շատ հեշտութեամբ և շուտով է կարողացվում:

Վերջացնում ենք մեր յօրուածը արտասովորով  
այստեղ Շահաղիբեանի գրքը հետեալ վերջին  
տողերը:  
«Նա գիտեմ որ մարդկութիւնը, եթէ ոչ շարու-  
նակաբար, բայց մտապէս առաջ է գնում և  
մնւք, որպէս մի փոքրիկ հասարակութիւն, մար-  
դաբար դարուտ օրէնքով ապահովված, չը պիտի  
զղարկենք այդ առաջադիտութեան ծանապա-  
հին: Սակայն ես մի բան ես գիտեմ. ձեր մտա-  
ւորական սովորութիւնները, ապառավոր պէս  
կարծրացած ձեր մէջ, արդէն ստացել են իրանց  
հասակը և ձեր և փոփոխվել այլ ևս կարող չեն:  
Իմ միակ յոյսն է այն մանուկ ազգը, որի կեն-  
դանութեան տերները աճ սկսում են կանա-  
չել. բայց և այնպէս մեծ արտոնութիւն կայ սըր-  
տիս վրա. ես մտածում եմ որ այդ տերներին  
շատերը, զեռ ծաղիկ ու պտղի չը հասած՝ նոյն յե-  
տադիտութեան հիւսիսից պիտի գեղնին ու գե-  
տին ընկնին: Ուրեմն մնում է ինձ գողգոջուն  
քայլերով մտենալ այն աղբիւ շրջանին, որ քող-  
թալով մտենալ այն աղբիւ շրջանին և նազելի  
կացած է մի փոքրթիւ, բայց աղբիւ իր առօրէ-  
անձերից, որ ընդունակ է ծանաչել իր առօրէ-  
կան շարն ու բարին և գին գնել իմ այն սանտա-  
խորհրդածութեանս: Եւ Աստուծոյ օրհնութիւնը  
անպակաս լինի դոցանից:»

«Հրապարակախոս Չայն» գիրքը բաղադրած է  
չորս յօրուածներից և ունի սկզբում Ս. Նազա-  
րեանցի պատկերը:  
Յանկալի է որ ամեն մի հայ, որ չէ պատկա-  
նում խառնարաններին՝ նախընտրել, իր սեղանի վրա  
ունենար այդ գիրքը:

«Русский Курьер» քաղաքին հեռագրում են հետևողականորեն որ մայիսի 10-ին այդ քաղաքի մէջ կառնաւորական երկու մարդիկ, որոնք Ս. Պետերբուրգից էին եկել և սարածում էին ժողովրդի մէջ յեղափոխական բովանդակութեան պրոպագանդաները:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ՅԻՆՍԻԱ**

Փարիզից գրում են հետևեալը: Օրվայ գլխաւոր խնդիրը մեռած Ֆրանսիացի տեղ փարիզի իններորդ շրջանի պատգամաւորի ընտրութիւնն է: Ֆրանսիական օրէնքները կառավարութեանը 3 տարի ժամանակամիջոց են տալիս ժողովից որ և է պատճառով պակասած մի պատգամաւորի տեղ ուրիշին ընտրելու համար: Այդ ժամանակամիջոցը ամենամեծն է և մինչև այժմ կառավարութիւնները դրա համեմատ են վարված: Այս անգամ անկարելի է այդ ժամանակամիջոցը նշանակել, որովհետև երեք ամիսից յետոյ կը լրանայ պատգամաւորների այժմեան ժողովի գործունէութեան շրջանը և նա կարծակզի, որպէս զի նոր ընտրութիւններ լինեն: Կառավարութիւնը փարիզի իններորդ շրջանի պատգամաւորի ընտրութիւնը նշանակեց մայիսի 29-ին և նրա այդ վարձուքը ամենքը հաւանում են: Իսկապէս կառավարութեան համար անհրաժեշտ չէ մի աւելորդ պատգամաւոր ունենալ, բայց որովհետև փարիզի իններորդ շրջանը պատմական նշանակութիւն է ստացել, կայսերութեան վերջին օրերում թիւերին ընտրելով, Մակ-Մաճօնի նախագահութեան ժամանակ Կրեվին, իսկ նրանից յետոյ Ֆրանսիացիներին, այդ պատճառով ընդհանուր ընտրութիւններից առաջ ամենաքի համար հետաքրքիր է իմանալ, թէ ինչպիսի բնաւորութիւն կը ստանան այն ցոյցերը, որոնց հողի վրա քննվում էին երկու նախագահների մրցութիւնը:

Այդ շրջանի համար մինչև այժմ յայտնի են երեք կանդիդատ. 1) Հեյրվիէ, պահպանողական հանրապետական, կամ ազատամիտ միապետական, մի խօսքով օրինակներին «Soleil» լրագրի խմբագիրը: Յուն վարին նա քաղաքային խորհրդարանի անդամ ընտրվեցաւ «Chausse d'Antin» քաղաքաբաժնի մէջ: 2) Պոլ Կիւբուա հակաբնասական, որ շատ համեստ քաղաքացի է, քաղաքային խորհրդատու և բժշկականութեան դոկտոր: Նա բաւական անընդունակ անձնավորութիւն է և ըստ վաղեմի սովորութեան ուսանողական ժամանակից պատկանում է այն խումբին, որ շրջապատում է Գամբետային: 3) Անատոլ Կելարֆօրտ հին հանրապետականը, որ իժէ արմատական չէ, գնեա 1848 թուականից առաջագէտ մարդկերանցից մէկն է համարվում: Գուցէ քաղաքական տեսակետից նրա անունը բաւական որոշված չէ, բայց նա անձնականապէս այնպիսի ծառայութիւններ է մատուցել, որոնք մեծ ազդեցութիւն են գործում հասարակութեան վրա: 1870 թուականին Aisne նահանգի պրեֆեկտ լինելով, որ կիսով չափ զբաղված էր թշնամի զորքերից, նա մի խումբ բանասերներով և հրդեհակէշ զինուորներով կատարելապէս պաշտպանեց «Saint Quentin» քաղաքը: 1877 թուականին Կելարֆօրտ մինիստրութեան ժամանակ նա, «մամուլի զիրկտոր» նշանակվելով, կառավարութեանը մի նախագիծ ներկայացրեց մամուլի կատարելապատութեան անհրաժեշտութեան մասին և,

կրք նրա նախագիծը չընդունվեցաւ, այսպազ հրատարակեցաւ իր պաշտօնից: Վերջապէս նորեւեմբեր նրան առաջարկվեցաւ «Saint Quentin» շրջանի պարլամենտական կանգիդատ լինել, բայց նա հրատարակեցաւ, ասելով, որ իր ամբողջ կենսի ընթացքում պաշտպանելով տեղական կանգիդատներին, նա չէ կամենում իր համագման հակառակ վարվել, մանաւանդ որ ինքը անձնականապէս գործին մասնակից է դառնում: Անձնական քաջութիւնը, եռանդը և շնչին փառասիրութեան բացակայութիւնը այնպիսի յատկութիւններ են, որոնք միշտ նկատվում են հասարակութեանց:

Եթէ մրցութիւնը միայն այս երեք անձինքներով կը սահմանափակվի, Կելարֆօրտի յաղթութիւնը անկասկածելի է, բայց մինչև մայիսի 14 ալ անձինք էլ կարող են հանդէս գալ: Խօսում են նոյնպէս Բանկի կանգիդատութեան մասին, որ ուժ տարի առաջ մահուան դատարարութեան «լինուորական դատարանից», որի անդամները զինուորականներ էին, բայց որտեղ արգարութիւն չը կար: Այդ անարգար և անհիմն դատավճիռը յայտնվեցաւ Մակ-Մաճօնի նախագահութեան առաջին տարիներում, երբ Բանկ Լիօնի շրջաններից մէկի պատգամաւոր էր: Հասարակութիւնը չէ մտադրել նոյնպէս և այն, որ կայսերութեան ժամանակ Բանկ արտաքսվեցաւ Ալժիրայի հեռաւոր տեղերից մէկը և 1859 թուականի ընդհանուր ներուժից յետոյ վերադառնալով փարիզ, ընդդիմադրական կուսակցութեան առաջաւոր անդամներից մէկն էր: Ամենքին յայտնի են նրա մտերիմ բարեկամական յարաբերութիւնները Գամբետայի հետ: Այս բոլոր հանգամանքները նրան մեծ առաւելութիւններ են տալիս, բայց դեռ ևս յայտնի չէ, կը համաձայնի արդեօք նա ընտրվել և ինչ կարծիք կը յայտնի Գամբետայ, որ բնակիլում է փարիզի իններորդ շրջանի մէջ և այդ շրջանի ընտրողներից մէկն է: «République Française» լրագրից այդ ընտրութիւնների մասին ոչինչ չէ գրում, կարծես Գամբետայ դրա վրա ուշադրութիւն չէ դարձնում և նրա բարեկամներն էլ լուռն են:

Մի և նոյն ժամանակ յայտնի է, որ Գամբետայ կամենում է զբաղվել այդ ընտրութիւններով: Կրանից կարելի է եզրակացնել, որ Գամբետայ Բանկին կը պաշտպանի:

Նորերում փարիզի մէջ լուր տարածվեցաւ, որ Ֆրանսիական զօրքերը Տունիսի արշաւանքի ժամանակ զբաղվել են աւարտութեամբ: Ասում են, որ նրանք թշնամիներին հարկաւոր կենդանիներ են յափշտակել: Թէպէտ մի քանի լրագրիչներ յարձակվում են այդ զօրքի դէմ, միւսները նրան արդարացնում են, ասելով, որ աւարտութեան առաջն անկարելի է սոսնձ պատերազմի ժամանակ:

Լրագրիչները հաղորդում են, որ Բարտելմի Անտուարի ստացել է հեռագրիներ Ալեկնայից, Բելլիւնից և Պետերբուրգից, որոնցով այդ քաղաքների կառավարութիւնները շնորհաւորում են Ֆրանսիական կառավարութեանը Տունիսի արշաւանքի յաջող վախճանը: Մի և նոյն ժամանակ յիշեալ երեք կառավարութիւնները հաւանում են Տունիսի և Ֆրանսիայի մէջ կայացած համաձայնութիւնը: Փարիզի մէջ զինուորական զօրքերի թիւերի նա սպասում Կատլիայի և Անգլիայի կողմից, որոնք, ինչպէս երևում է, մտադիր են առանձին պայմաններ և ապահովութիւն պահանջել Բելլիւնի նախահանգրտի համար: Բայց Ֆրանսիական կառավարութիւնը վճռել է ոչինչ պարտաւորութիւն չառնել իր վրա, ի նկատի առնելով Քիլերտայի նշանակութիւնը, որ իսկապէս Տունիսի մուտքն է: «National» լրագրից հաղորդում է, որ, երբ Ֆրանսիան դաշնագրութիւնը հաստատեց Տունիսի հետ, իտալական կառավարութիւնը դիմեց Բելլիւնի դաշնագրի ստորագրող պետութիւններին, եւրոպական մի կոնֆերանցիա կազմելու առաջարկութեամբ, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Ֆրանսիան խախտեց թիւրքաց կայսերութեան ամբողջութիւնը: Իշխան Բիսմարկ պատասխանել է, որ այդ առաջարկութիւնը անկարելի է ընդունել, առաջինը այն պատճառով, որ Ֆրանսիան չէ միացրել իր հետ Տունիսը և երկրորդը Բ. Կրան գերիշխանութիւնը Տունիսի վրա կասկածելի է:

Ֆրանսիայի և Տունիսի մէջ կապված դաշնագրութիւնը բողոքացած է մտաւորապէս 10 կէտերից: Կաշնագրութեան բնագիրը ուղարկված է փարիզ, որտեղ նա շուտով կը կարգաւորվի պատգամաւորների ժողովի մէջ: Կիւլոմատիական դժուարութիւնների քաղաքականներից ոչ ոք չէ սպասում: Թէպէտ Ֆրանսիան այդ հարցի վերաբերութեամբ զիպլոմատիական բանակցութիւններ չէ ունեցել, բայց անզիջական կառավարութեանը յայտնի են եղել նրա դիտաւորութիւնները:

«Daily News» լրագրին «չայերը և թիւրքերը» վերնագրով Կ. Պոլսից մի թրդ-թակից այսպէս է գրում: «Մուշի հայոց եպիսկոպոս ս. Գրիգորը և Բալանուէի առաջնորդ ս. Յովսէփը տաճիկ կառավարութեան կողմէն կայնաւորվում չայաստանից ուղարկվեցան Պոլիս պատճառ բերելով, թէ նոքա զրգուում են հայերին կառավարութեան դէմ: Հայոց ազգային պատկերներ ծախողները տակաւին բանտարկված են: Այս տարվայ օրացոյցն էլ է արգելվել այն դասագրքերի հետ միասին, որոնք պարունակում են Հայաստանի հին պատմութիւնը կամ աշխարհագրութիւնը: Այս դէպքում ասել են լուսաւորութեան նախարարին, որ մի ազգա փաշայ է, թէ հայոց պատմագրութեանց մէջ ճշմարտութիւն չը կայ, որովհետև հայերը երբեք անկախ չեն եղել և հարստութիւն ու թագաւորներ և գորապետներ չեն ունեցել: Վարչութիւնը արգելել է հայերին նմանապէս ամեն տեսակ ժողովներ, նոյն իսկ ուսումնական նիւթերի վրա դասախօսութիւններն էլ: Արեւելեան Հայաստանում գտնվող շաքարի գաւառի հայերը և թիւրքերը միատեղ մի աղիքաւոր են ուղարկել հայոց Պատրիարքին գանդատելով, թէ տաճիկ կառավարութիւնը չը նայելով սովին և թանկութեանը, մեծապէս խտտութիւնով հաւաքում է հարկերը, և թէ վերջի ժամանակներս քիւրդերը քանապան և հինգ զիւղեր են աւերել: Նոյն հարստահարիչ վիճակը տիրում է նաև Ալաշիրում:

Սըր Կիլի պատասխանում է միսթր Բաքսթըրին, որ հարցրել էր, թէ արդեօք (Անգլիոյ) կառավարութիւնը պիտի ջանայ Հայաստանի համար էլ մի այնպիսի վարչութիւն ձեռք բերել, որպիսին զոհացուցիչ կերպով դրժարկվել է Լիբանանի նահանգում, — ասելով թէ աւելի օգտակար են համարել Հայաստանի մասին խօսելը յետաձգել մինչև որ կը վերջանայ յունաց սահմանի խնդիրը: Երբոր կը հասնի յարմար ժամանակը, թագուհու վառավարութիւնը պիտի ամեն մի առաջարկութիւն նկատողութեան առնէ, որ կարող էր սուլթանի հպատակ հայերի վիճակը բարւոքել:

**ԹԻՒՐԿԻԱ**

«Daily News» լրագրին «չայերը և թիւրքերը» վերնագրով Կ. Պոլսից մի թրդ-թակից այսպէս է գրում: «Մուշի հայոց եպիսկոպոս ս. Գրիգորը և Բալանուէի առաջնորդ ս. Յովսէփը տաճիկ կառավարութեան կողմէն կայնաւորվում չայաստանից ուղարկվեցան Պոլիս պատճառ բերելով, թէ նոքա զրգուում են հայերին կառավարութեան դէմ: Հայոց ազգային պատկերներ ծախողները տակաւին բանտարկված են: Այս տարվայ օրացոյցն էլ է արգելվել այն դասագրքերի հետ միասին, որոնք պարունակում են Հայաստանի հին պատմութիւնը կամ աշխարհագրութիւնը: Այս դէպքում ասել են լուսաւորութեան նախարարին, որ մի ազգա փաշայ է, թէ հայոց պատմագրութեանց մէջ ճշմարտութիւն չը կայ, որովհետև հայերը երբեք անկախ չեն եղել և հարստութիւն ու թագաւորներ և գորապետներ չեն ունեցել: Վարչութիւնը արգելել է հայերին նմանապէս ամեն տեսակ ժողովներ, նոյն իսկ ուսումնական նիւթերի վրա դասախօսութիւններն էլ: Արեւելեան Հայաստանում գտնվող շաքարի գաւառի հայերը և թիւրքերը միատեղ մի աղիքաւոր են ուղարկել հայոց Պատրիարքին գանդատելով, թէ տաճիկ կառավարութիւնը չը նայելով սովին և թանկութեանը, մեծապէս խտտութիւնով հաւաքում է հարկերը, և թէ վերջի ժամանակներս քիւրդերը քանապան և հինգ զիւղեր են աւերել: Նոյն հարստահարիչ վիճակը տիրում է նաև Ալաշիրում:

նակը, թագուհու վառավարութիւնը պիտի ամեն մի առաջարկութիւն նկատողութեան առնէ, որ կարող էր սուլթանի հպատակ հայերի վիճակը բարւոքել:

Կ. Պոլսից գրում են «Standart» լրագրին թէ այդ մայրաքաղաքում մի շատ աճող կերպով վրդովված են զեպաններից մէկի մի դիտողութեամբը, որ նա այս մտա օրերս արել էր, թէ «անիշխապէս յունաց խնդիրը լուծվելուց յետոյ իսկոյն պիտի սկսվի Հայաստանի վերանորոգման խնդիրը և վերջացնվի»:

«Daily News» լրագրի թղթակիցը Պոլսից գրում է: տաճիկ կառավարութիւնը կասկած ունի թէ Ալաշիրայի, Բայազիդի և Բայբուրտի հայերը զիտաւորութիւն ունեն ապստամբվելու: Փաշու քաղաքում ամեն զիւր թիւրքերը զուարճանում են հայերի և նոցա եպիսկոպոսի աների վրա հրացան արձակելով: Մարթիայում հայոց վանքը կողոպուտ է դարձել: Ռուսները բազմութիւնուս դաղթականներ են մացնում Գարսի նահանգը:

**«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**

Մ Ի Ջ Ա Ջ Գ Ա Յ Ե Լ Ը Ն Կ Ե Բ Ո Ւ Թ Ե Ն Ի Յ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մայիսի: Երէկ հասաւ այստեղ նոր նուաճված ճեկէ ցիլի պատգամաւորութիւնը, որ կազմված է հինգ անձինքներից, տեղիցիների զինաւորված ոյժերի հրամանատար Տիկմա Արզարի հետ, որ բերել է իր հետ իր տաս արեւական որդի Ռուսցի-Բերդին նրան Ս. Պետերբուրգի զինուորական ուսումնարաններից մէկի մէջ թողնելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մայիսի: «Правит. Вѣстн.» լրագրից հաղորդում է իշխան Օրդենբուրգսկուն հրամայած է իրաւաբանական ուսումնարանի հոգաբարձու լինելու նոյն լրագրի մէջ տպված է: Պետական բանկի կառավարչի օգնական Նիկոլայեւի նշանակված է Ֆինանսների մինիստրի օգնական: Լուր է տարածված, որ շուտով հրաման կը տրվի զինուորական հագուստի ձևը փոխելու մասին:

Ա.Թ.Ե.Բ, 16 մայիսի: Յունաստանը ընդունեց յոյն-թիւրքական դաշնագրութիւնը: Հաւատարմատարներ են նշանակված սահմանագիծը որոշելու համար:

ԼՕՆՂՈՆ, 16 մայիսի: Միացեալաւորների մէջ, Իրանիայում, նշանաւոր կռիւ պատահեցաւ ժողովրդի և զօրքերի մէջ:

ՀՌՕՄ, 16 մայիսի: Նոր մինիստրութիւն կազմվեցաւ Կելարֆօրտի նախագահութեամբ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի: Պետական բանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 94 ռ. 37 կ., երրորդ 94 ռ. 35 կ., չորրորդ 94 ռ. 85 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ռ. 5 կ., երկրորդ 217 ռ. 5 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ռ. 37 կ., երկրորդ 93 ռ. 12 կ., երրորդ 93 ռ. 12 կ., ոսկի 8 ռ. 9 կ.: Ռուսաց 1 ռուբլ լօնդօնի վրա արժէ 24,28 պէնս, Ամստերդամի վրա 123 պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 207 մարկ 50 պֆ., Փարիզի վրա արժէ 256 ֆրանկ 25 սանտիմ: Բորսայի արամագրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆԻ

# Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

**ՎԻՆՆԱՅԻ ՄԵՐԷԼ** (աթոռներ և բազմաթոռներ) ծախվում են մեծ քանակությամբ և մանր, միջև փողոցում կատարվող փողոցի անկիւնում ՄԻ-ԲԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաբարգաքայիք կարող են դիմել այս հասցեով: **Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.**

2—150

144 Արծրունու գալերեա 144  
ամենախիտ պահեստ  
մեքելի և հայելիների:

Въ Редакціи газеты

«МШАРЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ  
ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննու-  
թիւնները

- Մայիսի 22 և 23-ին կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.
- " 25-ից—30-ը Հաւարարի Մարիաման օր. ուսումն.
- " 28 և 29-ին Կուկիու թանդոյեան օր. ուսումն.
- " 30-ին Հաւարարի Ս. Մինաս եկ. ուսումն.
- Յունիսի 1 և 2-ին Կուկիու Ս. Աստուածածին եկ. ուսումն.
- " 3 և 4-ին Ջորաշէն եկ. ուսումնարաններում.
- " 5-ին Շամբուեցոց եկ. ուսումնարանում.
- " 6-ին Չորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.
- " 8-ին Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.
- " 9-ին Չուղուրէթի Ս. Աստուած եկ. ուսումնարաններում.

Թեմական վերատեսուչ Բարխուդարեանց

Թիֆլիզում կազմվում է «Մարմնամարդական ընկերութիւն» (Гимнастическое общество), որի նպատակ է տալ իր անդամներին միջոց վարժ-վելու մարմնամարդութեան սրախաղութեան (фехтованье) և հրացան արձակելու մէջ, քաղաքից դուրս դրօսանքներ և ուրիշ թոյլ տված զուարճութիւններ անել, որոնք զարգացնում են ֆիզիկական կարողութիւնը:

Ընկերութեան կանոնադրութիւնը տեղութիւնից արդէն հաստատված է և տպված է № 90 «Кавказъ» լրագրի մէջ, ապրիլի 25-ին:

«Մարմնամարդական ընկերութեան» անդամ դրվել և տարեկան 10 ռուբլի վճարել կարելի է:

1) Փոխարքայի պալատը կառավարութեան ղեկարարամենում, կարլ կարթովիչ Կեստերի մօտ, ամենայն օր 11 ժամից մինչև ժամը 3 յե-րեկվալ:

2) Վիկտոր Ալէքսանդրովիչ Կիշեկչեանի մօտ 6-ից մինչև 8-ը երեկոյեան, Թամաշկիլի տանը, Սոլախախի բաղարի վրա:

3) «Кавказъ» լրագրի խմբագրութեան մէջ:

4) Ալէքսանդր Ալէքսանդրովիչ Կրուչեպի մօտ: Միխայիլովիչայ փողոցի վրա, առևտրական մա-գալնում:

ՎԱՃԱՌՈՒՄՆ ԱՆԳՎԻՍՏԱՆԻ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՏՐՃԻՆ ԵՒ ՔԻՆՆԱ-ներ 1 ռ., ԲԱՍՏԱՆԵՐ 12 կ., ՋՐԱՄԱՆԵՐ 50 կ., հրացաններ 20—100 ռ., ՄԱՏՈՒ-ՑԱՐԱՆԵՐ 5 կ. մինչև 5 ռ., ՄԱՃԱՅԱՍ-ներ 5—50 ռ., Ժիւններ 75 կ., վարակի-ներ 4 ռ., ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏԵՐ ը-տղամարդկերանց 14 ռ., ԳԼԽԱՐԿՆԵՐ 1 ռուբլի, մակիտաշներ 6 ռ., հին պորտվէյն և խերես 1 ռ. 20 կ. շիշը, կօխակ առա-ջին տեսակի 1 ռ. 75 կ., ՊԻՎՈՒԼԻ 50 կ. թէյամաններ 25 կ., ՊԱՏՈՒԱԿԱՆ ՔԷՑ 1 ռ. 40 կ. առանց թղթի: Ծախվում են ԱՆ-ԳԼԽԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ԱԼԲՈՄԵՆԵՐ շատ էժան: 13—15

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՅՅԻԻ ԽԵՆԹԸ**՝ անու-նով փոխասնութիւնը: Եւր դնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահաթեհ-Յախթեանցի տպարանը: ԲԱՅՈՒՄ պ. Ալէքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՋ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին:  
Հրատարակչի հասցեն. Шуша, въ конторѣ Аруянца АБЪЛУ АП-РЪСЯНЦУ.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում են Կինարծնական Գրախաճատանո-ցում հետևեալ գրքերը:

1. Հայք և Հայաստանը օտարներին աչքում, հրատարակական դա-սախօսութիւն ընթերցուած Թիֆլիսի ժողովարանում մայիսի 17-ին 1879 թ. Արգար Յոխանէսեանի թ. 1881 թ. գ. 30 կողմ:
2. Մտաւոր ֆիզիքական և բարոյական ինքնակրթութեան մասին, խորհուրդներ այն երիտասարդներին, որոնք կանքի ասպարէզը մտնում և ցանկ-կանում են կանոնաւորապէս պատրաստուիլ ուսումնական և հասարակական գործու-նէութեան համար. հեղ. Ջոն Սախարա Բլեկիլի, թարգ. Գր. Շահբաղդեանց Տ. 1881 թ. գ. 60 կ.
3. Հենչէլի. Բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ ծխական դպրոցների համար փոխադրեց Ս. Մանգինեանց 1-ն և 2-ը տարի, թ. 1881 թ. գ. 40 կ.
4. Քննար Ժողովրդական երգեր հեղ. Խաչ. Տէր-Խաչատրեանց, Երևան 1880 թ. գ. 45 կ.
5. Նոյն տեղը վաճառվում են հետևեալ գրքերը:
6. Մարկոս Արևիկոս կոյսեր իմաստասիրական և խրատական թղթերը, Վե-նետիկ գ. 1 ռ. 50 կ.
7. Բիլլէի ու Ռոլանդի. Պատմական վիպասանութիւն Ք. Վ. Սէնդին Գաղղիացոյ Վենետիկ գ. 1 ռ 50 կ.
8. Մագդալենայի վիպասանութիւն Պ. Յուլիոսի Սանտոյ. անդամ Գաղղիայ Ճեմարանին, Վենետիկ գ. 1 ռ.
9. Սող. Կինների քերթուած ի մահն Արևիկ թարգ. Հ. Մանուէլի Վ. Ջախ-ջախեան Վենետիկ գ. 1 ռ. 75 կ.
10. Ֆենելոնի Արևածք Տելեմաքայ, թարգ. Եղուարդայ Վ. Հուրմուզեան Արք-եպ. Երևանի Վենետիկ գ. 3 ռ. 50 կ.
11. Առաքել Եղովրոսի, թարգ. ի գաղղիական լեզուէ Հ. Մինաս Վ. Բժշը-կեան Վենետիկ գ. 2 ռ. 50 կ.
12. Յուլիոսի Կեսարու յիշատարանք գաղղիական պատերազմին, թարգ. Հ. Ար-սևնի Կ. Բագրատունեայ Վենետիկ գ. 1 ռ. 75 կ.
13. Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանեայց գաղատանց տղայոց հայոց համար Հ. Մանուէլ Վ. Քաջունի Վենետիկ գ. 1 ռ. 50 կ.

Օտարաբարգաքայիք ծանապարհի ծախք են վճարում իւրաքանչիւր ռուբլուն 10 կ. առանց փողի պատուէրները չեն կատարվում:

Չը նայելով մաքսերի աւելանալուն սպրանքները առաջվայ գներով կը ծախվին. **ԿՈՆԳՈՒԹԷՅ** 1 ռ. 5 կ. և 1 ռ. 10 կողմ, շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ռ. 20 կ. և 1 ռ. 40 կ., հիւնալի **ԿԱՅՍԱՌԻ** 1 ռ. 60 կ. և 1 ռ. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ ԹԷՅ** 2 ռ. առանց թղթի: Անգլիական բէլգիլներ 4 ռ.—40 ռ. և հրացաններ 20 ռ.—200 ռ. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆԱԲԻԻ ԹԱՄԲԵ-ՐԸ**, Ջոնսոնի **ԿՈՂՊԷՔԵՐԸ**, Տուրոսի **ԳՐԻՉՆԵՐԸ** և Էկատրակտ կակաօ-շօխաղի ծախելու համար, որոնք ֆարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեղալ ստացան: **ՀՈՏԱԻԷՑ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ռ. 65 կ. և ամենալաւը 2 ռ. 30 կ.: Վաճառականներին օգտուէտ է մեծ քանակութեամբ սպրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ռ., կօնֆետներ հազի գէմ 60 կ. ֆունտը: 76—100

«Խ Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՏՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՌՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՅՅԻԻ

Տպված մաքուր թղթի վրա, գրքը բաղ-կանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է «Մշակի» խմբագրատանը, «Կինարծնական գրախաճատանոցում», «Կովկասեան գրա-վաճառանոցում» պ. Ջաքարիա Գրիգորեան-ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզար-ջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագալին-ներում:

Գինն է 1 ռուբլ 20 կողմ:

ԱՐՄՐՈՒՆՈՒ զալլէրէում յուլիս ամսից վարձով տրվում է ՊԱՏՐՈՒՄԻ մօտ եղած բուֆէտը և ընտարանը: Յանկացողները թող դիմեն Արծրունու գալերէայի կան-տորա:

9—10

**ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳ-ԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆԸ** ծախվում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ սպրանքներ: Որովհետև այդ մա-գալիններ ստանում է թէյ ուղղակի պլան-տատորներէրց, առնում է բոլոր սպրանքները ուղղակի գործարաններից և բաւական-նում է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 Ֆունտ թէյ առաջին տե-սակի, կակաօ և շօխաղ-Ֆրայ, մուրաբա և կօնֆէկաներ 25% աւելի էժան, քան թէյ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ը-կօլօլէրներ, կողպէքներ, մատուցարաններ, ա, մաններ, դանակներ, գալներ, թէյաման-ներ, բաժակներ, թմաքեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ-մակիտաշներ, կալնկօր, թուղթ, մատիտ-ներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի է-ժան քան թէյ ուրիշ տեղ: Արծրունու գալլէրէում: 100—98

**ՄԻՆՉԵԻ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊ-ՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ ԳՐԳԵՐԸ:**

- 1) Երկու մանրակէպ. Ալֆօնս Գորէից թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.
- 2) Պօղոսեան ուսուցչի օրագրից, թարգմ. Տ. Նազարեան: 20 կ.
- 3) Պարսկ ժամեր, ինքնուրոյն բանա-տեղծութիւններ: Ն. Տ. Աւետիքեան: 25 կ.
- 4) Հանապարհորդութիւն Ղարաբաղում, Այցախեցի . . . . . 30 կ.
- 5) Ծաղիկ և ծաղիկահատութիւն, թարգմ. Տ. Նազարեանցի: . . . . . 15 կ.
- 6) Քնար խօսնակ, բանաստեղծութիւն-ներ Ն. Տ. Աւետիքեան: . . . . . 50 կ.

Այս փոքր գրքի գինն է միասին 1-50 կողմէ: Առանձին մէկի համար բաժանոր-դագրութիւն չէ ընդունվում, բացի «Քնար խօսնակից» որի համար առանձին կարելի է ստորագրել և ֆինացեալ հինգը առանձին: Հրատարակչի հեղան Յ. Նազարեան:

«ԵՊՐ ԿԱՍՈՒՄՕՎ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ զըր-խաւոր գրասենակի մէջ, Երևանիկայա հրա-պարակի վրա, Ձախելու տանը բացված է ստորագրութիւն յօգուտ 'ի Տէր Հանգու-ցեալ կայսր Ալէքսանդր II-ի ՈՐԲԱՆՈ-ՑԻ, որ բացվելու է Թիֆլիսի մէջ: 2—15

Արդէն վաճառվում է  
**ԻՆՉ ԲԱՆ Է  
ԺԱՆՏԱԽՏԸ**

Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից: Ժո-ղովրդական և հասարակաց մասշիխ խրատ բժէշկ Պ. Ա. Կլինսկոյ:

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրեանց Գինն է 15 կողմ. 100-ներիով գնողներին զի-ջուան կը վնի: Մեր հասցեն՝ Въ Әривань  
A. Гуламиряну